

Միր, Բեգ, Աղա.— Կրնան կազմուիլ աշիրներէ, և աշիրներէ դուրս մնացած միւս քիւրդերէ, որոնք նստակեաց կամ կէս-թափառական քիւրդերուն Շեֆութիւն կ'ընեն:

Քօչարի.— Քօչարիները իրենց հին անունով կը կոչուին և բեվիս. հայերն ալ ըէվլէնա բառը կը գործածեն յափշտակիչներու բնաւորութիւնը որոշելու համար. ասոնք թափառաշըրջիկ (նօմատ) քրդերն են, որոնց բնակութեան ու ապրուստի սահմանը իրենց և զրացիներու երկիրներն են, մեծ ընդարձակութեան վրայ:

Բահար.— Բահարթ բառը կը հասկացուի քիւրդերու մէջ այն առումով՝ որ անոնք բացարձակապէս նստակեացներ են ու զուրկ զինուորական և պատերազմական յատկութիւններէ. կամ այդ զբաղումով չը պարապելով՝ աշխատանքի մարդիկ են, երկրագործութեան, հովուութեան և ուրիշ ծառայութիւններու մէջ: Բահարթը պարզ հպատակ է քիւրդ իշխողներուն և Օսմ. աէրութեան միանդամայն: Բահան միւս քիւրդերու համար կը համարուի նորս և անարգուած:

Քիւրդ բահան կ'ապրի գրեթէ հայ գիւղացու կեանքով:

Հ Ո Ղ Ա Յ Ի Ն Հ Ա Ր Յ Ը

(Հողային հարցը Քիւրդիստանի մէջ՝ ցեղական պետութեան իբր հիմը. Հողի գործածութիւնը. Հայկական երկիրներու մէջ Քիւրդերու սարածականութեան միջոցը. Բռնապետութիւններն ու գրաւումները. Հայ-Քրդական յարաբերութիւններու լարումին մէկ պատճառը:)

Քիւրդ ցեղերու համար հողային հարցը, ցեղերու սկզբնական պետական գոյութիւնն է. ցեղապետութեանց սահմաններու մէջ ոչ միայն հողը չի ծախուիր, այլ և ուրիշ ցեղի օտար բնակիչ մը իրաւունք չունի այդ սահմաններու մէջ ապրելու, և նոյնիսկ իբր ճամբորդ անցնելու, առանց յանձ-